120 000 հայ գտնվում է Ադրբեջանի կողմից շրջափակման մեջ

2023 թվականի հունիս 29-ին լրանում է շրջափակման 200-րդ օրը

29 հունիսի 2023թ.

Կոնտակտային անձ՝ Մարիա Գևորգյան
info@cftjustice.org
2100 Մոնթրոսի պող. #715, Մոնթրոս, Կալիֆորնիա 91020
Ճշմարտության և արդարադատության կենտրոնը (ՃԱԿ) 501(c)(3) գրանցված կորպորացիա է:ԱՄՆ դաշնային հարկ վճարողի հաշվառման համար # 87-1681664
www.CFTJustice.org
@CFTJustice @CFTJustice @CFTJustice

Բովանդակություն

1.0 Ներածություն ... 3
1.1 Ճշմարտության և արդարադատության կենտրոն ... 3
2.0 Ընդհանուր տեղեկություններ ... 4
2.2 Շրջափակումը ... 4
2.3 Հայաստանում տեղակայված Եվրոպական միության առաքելությունը ... 5
2.4 Արդարադատության միջազգային դատարանի որոշումը ... 6
3.0 Լեռնային Ղարաբաղին տրամադրվող մարդասիրական օգնությունը դադարեցվել է ... 6
3.1 Վկայություն. Բաժանում և մահ ... 6
«[Ն]րանք մեր կյանքի հետ են խաղում: Իսկ դա վատ հետևանքներ կունենա» ... 7
«[Մ]եզ մոտ կան տարեց և հղի կանայք, որոնք հիվանդանոցային խնամքի կարիք ունեն: Ինչպե՞ս կարող ենք այսպես ապրել: Դրանք անմարդկային պայմաններ են» ... 8
3.2 Վկայություն. Ուղևորություններն ու ընտանիքի վերամիավորումը գրեթե անհնար են ... 8
Վկա 23LC-0009 ... 8
Վկա 23LC-0006 ... 10
«[Մ]եր տունը 15 րոպե հեռավորության վրա էր, բայց մեզ թույլ չտվեցին գնալ» ... 10
Վկա 23LC-NK0007 ... 11
3.3 Վկայություն. Վառելիքի, էլեկտրաէներգիայի և սննդի պակաս ... 12
Վկա 23LC-NK0002 ... 12
Վկա 23LC-NK0030 ... 12
Վկան 23LC-NK0028 ... 13
«[Ա]յս ճանապարհը մեր միակ հույսն է: Մենք գնում ենք մեր մահին ընդառաջ: Սա կհանգեցնի ցեղասպանության» ... 14
4.0 Նախագահ Ալիևի էթնիկ զտումների քաղաքականությունը ... 14
«[Ա]յսպիսով, ով չի ցանկանում մեր քաղաքացին դառնալ, ճանապարհը փակ չէ, այն բաց է: Նրանք կարող են հեռանալ երբ ցանկանան, ոչ ոք նրանց չի կանգնեցնի» ... 15
5.0 Ադրբեջանը խախտում է միջազգային իրավունքը ... 15
5.1 Ադրբեջանը խախտում է եռակողմ հայտարարությունը ... 17
6.0 Եզրակացություն ... 18
6.1 Գործողություններ, որոնք պետք է ձեռնարկի Ադրբեջանը ... 18
6.2 Գործողություններ, որոնք պետք է ձեռնարկի միջազգային հանրությունը ... 19

1.0 Ներածություն

2022 թվականի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը շրջափակել է Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող բոլոր տրանսպորտային ուղիները: Շրջափակման արդյունքում դադարեցվել են ապրանքների և դեղորայքի ինչպես մասնավոր, այնպես էլ առևտրային փոխադրումները, ինչը հանգեցրել է 120 000 հայերի բանտարկմանը Լեռնային Ղարաբաղում: Արդյունքում, խանութներն ու դեղատները սպառել են իրենց պաշարները՝ առաջացնելով կտրոնային համակարգի միջոցով սննդի նորմավորման անհրաժեշտություն: Վիրաբուժական միջամտությունները դադարեցվել են, և միայն Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ)՝ ռուս խաղաղապահների ուղեկցությամբ, ժամանակ առ ժամանակ օգնում է ծանր հիվանդների տեղափոխմանը Հայաստան: Բացի այդ, Ադրբեջանը պարբերաբար դադարեցրել է էլեկտրաէներգիայի և գազի մատակարարումը, ինչի հետևանքով ձմռան ամիսներին տների ջեռուցման, կապի և ինտերնետ հասանելիության երկարատև խափանումներ են եղել:

Ճգնաժամը խորացնելու նպատակով 2023 թվականի հունիսի 15-ին Ադրբեջանը դադարեցրել է Լեռնային Ղարաբաղի բնակչության համար նախատեսված ողջ մարդասիրական օգնության փոխադրումը[1]: Արդյունքում, Լեռնային Ղարաբաղում բնակվող 120 000 հայերը, այդ թվում՝ 30 000 երեխա, ներկայումս զրկված են առաջին անհրաժեշտության պարագաներից՝ սնունդ, դեղորայք, գազ, էլեկտրականություն և ինտերնետ հասանելիություն: Նրանք հայտնվել են բաց բանտում՝ շրջապատված ադրբեջանցի զինվորներով, որոնք հաճախ կրակ են բացում և ռազմական հարձակումներ իրականացնում հայ հողագործների և Լեռնային Ղարաբաղի բնակիչների վրա՝ սարսափ տարածելով և մարդկային կորուստներ պատճառելով: 2023 թվականի հունիսի 27-ին, այն օրը, երբ Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները ժամանեցին Վաշինգտոն՝ ԱՄՆ պետքարտուղարի միջնորդությամբ խաղաղ բանակցությունների համար, Ադրբեջանը անօդաչու թռչող սարքերով և հրետանային կանխարգելիչ հարձակումներ ձեռնարկեց Լեռնային Ղարաբաղին, ինչի հետևանքով զոհվեց չորս զինծառայող:

Սույն զեկույցում ներկայացվում են ականատեսների վկայությունները, ովքեր նկարագրում են շրջափակման մեջ ապրողների ծանր պայմանները: Նրանց գաղտնիությունը պաշտպանելու համար մենք այդ անձանց ներկայացնելու ենք հետևյալ կեղծանուններով՝ 23LC-0009, 23LC-0006, 23LC-NK0007, 23LC-NK0002, 23LC-NK0030, and 23LC-NK0028:

1.1 Ճշմարտության և արդարադատության կենտրոն

Ճշմարտության և արդարադատության կենտրոնը (ՃԱԿ, The Center for Truth and Justice) 501(c)(3) գրանցված շահույթ չհետապնդող ամերիկյան կազմակերպություն է, որը գտնվում է Կալիֆորնիայի Լոս Անջելես քաղաքում: Կենտրոնը փաստագրում է 2020թ. Ղարաբաղյան պատերազմից ի վեր հայերի նկատմամբ մարդու իրավունքների խախտումները և պատերազմական հանցագործությունները: Ճշմարտության և արդարադատության կենտրոնը փաստահավաք ենթակառուցվածք է ստեղծել տարածաշրջանում և անձամբ տուժողներից հավաքագրում է նրանց վկայությունները:

[1] Amnesty International-ը հայտնում է Լեռնային Ղարաբաղին սննդի մատակարարումների և մարդասիրական օգնության դադարեցման մասին, (28 հունիսի 2023թ.)

Կենտրոնի կողմից կիրառվող՝ ապացույցների հավաքագրման մեթոդաբանությանը կարելի է ծանոթանալ Մեթոդաբանություն բաժնում: Կենտրոնը պահպանում է ապացույցները և դրանք հասանելի դարձնում կրթական նպատակների, շահերի պաշտպանության և հնարավոր դատական գործընթացների համար: ՃԱԿ-ի թիմը կազմված է ԱՄՆ-ում, Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում գործող փաստաբաններից և իրավաբանական ֆակուլտետի ուսանողներից, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպաններից և այլ մասնագետներից:

2.0 Ընդհանուր տեղեկություններ

2.1 44-օրյա պատերազմը

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը Թուրքիայի լուրջ աջակցությամբ սկսեց չհրահրված և լայնածավալ ռազմական ներխուժում Լեռնային Ղարաբաղ: 44 օր անընդմեջ Ադրբեջանն անխնա ռմբակոծեց Լեռնային Ղարաբաղը, որտեղ բնակվում է 120 հազար հայ: Այս հակամարտությունը տևեց 44 օր և 5000 հայերի ողբերգական կորստի պատճառ դարձավ: Այդ զոհերի մեծ մասը չի եղել ուղղակի մարտերի հետևանքով. ավելի շուտ դրանք հիմնականում կապված են եղել Ադրբեջանի կողմից հրետանային հարվածների և անօդաչու թռչող սարքերի հարձակումների լայնածավալ կիրառման հետ: Քաղաքացիական ենթակառուցվածքները, ներառյալ եկեղեցիները, դպրոցները, հիվանդանոցները և նույնիսկ ծննդատունը, դարձան Ադրբեջանի անողոք ագրեսիայի կանխամտածված թիրախ: Մինչ Հայաստանը, զինված հնացած ռազմական սպառազինությամբ ու համակարգերով, փորձում էր պաշտպանվել անսպասելի հարձակումից, Ադրբեջանը վայելում էր ռազմական գերտերությունների աջակցությունը, ինչպիսիք են Իսրայելն ու Թուրքիան: Վերջինս ՆԱՏՕ-ի անդամ է: Ադրբեջանը վերահսկողության տակ վերցրեց Լեռնային Ղարաբաղի զգալի մասը: 2020 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանը, Ադրբեջանը և Ռուսաստանը ստորագրեցին հրադադարի մասին համաձայնագիր, որը հայտնի է որպես «Եռակողմ հայտարարություն»: Հրադադարի համաձայնագրի պայմանների համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ ուժերը պետք է տեղակայվեն հակամարտության գոտում մինչև 2025 թվականը՝ հետագա երկարաձգման հնարավորությամբ:

2.2 Շրջափակումը

2022 թվականի դեկտեմբերի 12-ին ադրբեջանական ծագում ունեցող անձինք, որոնց թվում էին ինչպես քաղաքացիական անձինք, այնպես էլ քաղաքացիական հագուստով զինվորներ, ովքեր իրենց ներկայացնում էին որպես «էկոակտիվիստներ», հիմնեցին վրանային ճամբարներ՝ փաստացի 138 օրով փակելով Լաչինի միջանցքը: Այդ միջանցքը Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհն է: Սկզբնական այդ փուլը նշանավորեց շրջափակման սկիզբը, որը շարունակվում է արդեն ավելի քան 200 օր՝ լրջորեն սահմանափակելով ապրանքների և Լեռնային Ղարաբաղում բնակվող բոլոր հայերի ազատ տեղաշարժը:

Շրջափակման հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակիչները չեն կարողանում գնալ Հայաստան և վերադառնալ: Տարանցիկ փոխադրումների դադարեցումը հանգեցրել է բեռնափոխադրումների ամբողջական դադարեցմանը, ներառյալ կենսական

նշանակության ապրանքների, այդ թվում՝ սնունդ և դեղորայք: Տարանցիկ փոխադրումների հնարավորության միակ բացառությունը, որը տրվում է ընտրողաբար, կատարվում է ծանր հիվանդների համար, և նույնիսկ այդ դեպքում նրանց պետք է ուղեկցեն ԿԽՄԿ-ի ներկայացուցիչները և ռուս խաղաղապահները՝ նրանց անվտանգ անցումն ապահովելու համար:

Ինքնահռչակ «էկոակտիվիստները» ռազմավարական նկատառումներից ելնելով տեղակայվել էին Լաչինի միջանցքի երկայնքով և ստանում էին լիարժեք ֆինանսական աջակցություն Ադրբեջանի կառավարություն կողմից[2] և ռուս խաղաղապահների լուռ աջակցությունը: Նրանք հովանավորվում էին Ալիևի ռեժիմի կողմից, և բնապահպանական խնդիրը, որի դեմ նրանք իբր բողոքում էին, բոլորովին անհիմն էր[3]: Շրջակա միջավայրի իրական որևէ խնդիր չկար այն տարածքում[4], որտեղ նրանք արդյունավետ կերպով խոչընդոտում էին երթևեկությանը, ուղևորություններին և տարանցմանը: Դա մի քարոզարշավ էր, որը հովանավորվում էր պետության կողմից և ստեղծվել էր Լաչինի միջանցքով ցանկացած տեղաշարժը դադարեցնելու և Լեռնային Ղարաբաղում ապրող 120 000 հայերին անարդարացիորեն բանտարկելու միակ նպատակով՝ բնակչությանը ստիպելու ենթարկվել ադրբեջանական կառավարմանը կամ արտաքսվել իրենց տներից և հայրենիքից:

2022 թ. դեկտեմբերի 20-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներն իրենց մտահոգությունը հայտնեցին և կոչ արեցին Ադրբեջանին բացել Լաչինի միջանցքը, իսկ ներգրավված կողմերին՝ հավատարիմ մնալ 2020 թ. նոյեմբերին ստորագրված հրադադարի համաձայնագրով[5] սահմանված պայմաններին: Անդամ երկրները հասել են ընդհանուր կոնսենսուսի, որ շրջափակումը մարդկային ծանր տառապանքների պատճառ կդառնա, և շեշտել անարգել տեղաշարժն անհապաղ վերականգնելու հրատապ անհրաժեշտությունը: Սակայն 2023 թվականի հունիսի 29-ի դրությամբ Լաչինի միջանցքը մնում է անանցանելի ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր տրանսպորտային միջոցների համար, ինչը դժվարացնում է առաջին անհրաժեշտության ապրանքների, այդ թվում՝ դեղորայքի առաքումը: Լեռնային Ղարաբաղում իրավիճակն այնքան կրիտիկական է դարձել, որ 2023 թվականի հունիսի 26-ին ԿԽՄԿ-ն ուղղաթիռով Հայաստանից Լեռնային Ղարաբաղ է տեղափոխել առաջին անհրաժեշտության դեղամիջոցներ:

2.3 Հայաստանում տեղակայված Եվրոպական միության առաքելությունը

2023 թվականի փետրվարին 40 քաղաքացիական անձանցից բաղկացած Եվրոպական միության դիտորդական առաքելությունը տեղակայվել է սահմանի հայկական կողմում՝ ադրբեջանական զորքերի տեղաշարժերն ու հրադադարի ռեժիմի խախտումները դիտարկելու համար:

---

[2] «Mikroskop»-ի հետազոտությունը Ադրբեջանի կառավարության կողմից Լաչինի միջանցքում կազմակերպված ակցիաների վերաբերյալ (19 հունվ. 2023թ.), Ողբա՞ն դրամաշնորհ են ստացել «էկոակտիվիստներն» Ադրբեջանի կառավարությունից

[3] EU Observer (18 հունվ. 2023թ.), Հայտնի գիտնականը բացահայտում է, թե ինչպես է Ադրբեջանը գիտական հիմնավորումներով լվանում շարունակվող «էկոցույցը» լրատվամիջոցներում

[4] TIME (22 փետր. 2023թ.), Շրջակա միջավայրի պահպանությունը որպես զենք օգտագործելը՝ էթնիկ զտումներ իրականացնելու համար

[5] ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Ադրբեջանի սադրանքների և եռակողմ հայտարարության խախտումների մասին, SC/15154 (20 դեկտ. 2022թ.), ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ

2.4 Արդարադատության միջազգային դատարանի որոշումը

2023 թվականի փետրվարի 22-ին՝ Լաչինի միջանցքի շրջափակման 73-րդ օրը, Արդարադատության միջազգային դատարանը (ԱՄԴ) «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով կայացրել է հետևյալ միջանկյալ միջոցները կիրառելու վերաբերյալ որոշում[6].

> «Ադրբեջանի Հանրապետությունը պարտավոր է, մինչև այդ գործով վերջնական որոշման կայացումը և «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների համաձայն ձեռնարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ Լաչինի միջանցքով երկու ուղղություններով մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժն ապահովելու համար»:

Չնայած դատարանի որոշմանը, որը կրկնել և հաստատել են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը[7], ինչպես նաև ԵՄ-ն[8] և ԱՄՆ-ն[9], Ադրբեջանը շարունակում է շրջափակման մեջ պահել Լաչինի միջանցքը և վտանգել 120 000 մարդու կյանքը:

3.0 Լեռնային Ղարաբաղին տրամադրվող մարդասիրական օգնությունը դադարեցվել է

2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լաչինի միջանցքն արգելափակված է: 2023 թվականի հունիսի 14-ից ամբողջությամբ դադարեցվել են բոլոր փոխադրումները, ներառյալ կյանքին վտանգ սպառնացող պայմաններում գտնվող անձանց համար: Ամբողջությամբ դադարեցվել է նաև մարդասիրական օգնության տեղափոխումը: Ադրբեջանի այս անօրինական արարքը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը դատապարտել է սովի և մոտալուտ մահվան:

3.1 Վկայություն. Բաժանում և մահ

23LC-NK0002 վկան (ականատեսը)[10] ծնվել է 1973թ. և մեծացել Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետության (ԽՍՀ) Բաղրա քաղաքում: Նա ապրում է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: Նա և իր ընտանիքն ականատես են եղել 1988 թվականին Ադրբեջանի կողմից հայերի նկատմամբ

---

[6] Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառում, «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի», 2023թ. փետրվարի 22-ի որոշում, Ընդհանուր ցանկ No. 180, կետ 14, ԱՄԴ-ի նյութեր

[7] ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ԱՄԴ-ի որոշումների մասին (24 փետր. 2023թ.), ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը ԱՄԴ-ի որոշման մասին

[8] Եվրախորհրդարանի 2023 թվականի հունվարի 19-ի բանաձևը Լեռնային Ղարաբաղում շրջափակման հումանիտար հետևանքների մասին 2023/2504(RSP), Եվրախորհրդարանի բանաձև; Ընդունվել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 2023թ. հունիսի 22-ի «Լաչինի միջանցքով ազատ և անվտանգ երթևեկության ապահովում» բանաձևը

[9] Պետքարտուղար Բլինքենը հեռախոսազրույցը Ադրբեջանի նախագահ Ալիևի հետ (23 հունվարի 2023թ.), ԱՄՆ պետքարտուղարի հեռախոսազրույցը

[10] 2023թ. փետրվարի 2-ին ՃԱԿ-ն (CfTJ) արձանագրել է 23LC-NK0002 վկայի ցուցմունքները

իրականացված Սումգայիթի ջարդերին[11]: Վայրագությունները տեսնելով նրա հայրը սրտի հետ կապված խնդիրներ է ունեցել և մահացել: Այդ վայրագություններից փրկվելու համար վկան և իր մայրը փախել են Ադրբեջանից և հայտնվել և բնակություն հաստատել Լեռնային Ղարաբաղի Վանք գյուղում:

Վկայի ամուսինը կռվել է 1988-1994թթ. Ղարաբաղյան առաջին պատերազմում: Առաջին այդ պատերազմի ընթացքում, երբ Լեռնային Ղարաբաղը պայքարում էր ադրբեջանական տիրապետությունից իր անկախության համար, վկայի զարմիկը գերեվարվել է ադրբեջանական բանակի կողմից և զոհվել որպես ռազմագերի գերության մեջ:

Վկայի կրտսեր որդին և նրա փեսան կռվել են Ադրբեջանի դեմ 2016 թվականին, երբ Լեռնային Ղարաբաղը չորս (4) օր անընդմեջ ենթարկվել է ռազմական հարձակման, ռմբակոծության և հրետակոծության: Եվ հետո նորից՝ 2020 թվականին, 44-օրյա պատերազմի ժամանակ, երբ Ադրբեջանը հարձակվեց Լեռնային Ղարաբաղի վրա, նրա երկու (2) որդիները կրկին կռվում էին:

Կռիվներն այնքան դաժան ու անողոք էին, որ 2020 թվականի հոկտեմբերի 15-ին վկան ստիպված էր փախչել իր Վանք գյուղից: Նրա դուստրն իր երեք մանկահասակ երեխաների հետ նույնպես ստիպված է եղել փախչել անվտանգ վայր՝ թողնելով իր տունն ու իր ողջ ունեցվածքը Հադրութի շրջանի Տումի գյուղում: Վկայի դուստրը և երեք (3) թոռները չեն կարողանում վերադառնալ իրենց տուն, քանի որ իրենց գյուղը գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ, իսկ վերադարձը կնշանակի ձերբակալում և մահ: 23LC-NK0002 վկայի դուստրն ու թոռներն այժմ ապրում են Հայաստանում:

2020 թվականի դեկտեմբերի 21-ին 23LC-NK0002 վկան կարողացել է վերադառնալ տուն՝ Լեռնային Ղարաբաղի իր Վանք գյուղը:

Այսօր նա և իր ընտանիքը ապրում են շրջափակման մեջ և սարսափելի զրկանքներ են կրել: Նրա փոքրիկ թոռնուհուն անհրաժեշտ է կաթի փոշի / մանկական կաթնային խառնուրդ և տակդիրներ: Մանկական սննդի խիստ կարիքից ելնելով 23LՑLC-NK0002 վկան սկսել էր հայտարարություններ տեղադրել սոցիալական ցանցերում՝ իր թոռնուհու համար պարագաներ փնտրելու նպատակով:

Բացի այդ, նրա սկեսրայրը վատառողջ է և բժշկական հսկողության կարիք ունի: Սակայն վառելիքի բացակայության պատճառով նրան չեն կարողանում տեղափոխել հիվանդանոց: Կինը նշում է.

«[Ն]րանք մեր կյանքի հետ են խաղում: Իսկ դա վատ հետևանքներ կունենա»

Նա պատմում է, թե ինչպես է իր հղի հարսին շտապ անհրաժեշտ եղել հիվանդանոց տեղափոխվել, բայց վառելիքի և էլեկտրականության բացակայության պատճառով

[11] 1988 թվականի փետրվարի վերջին Ադրբեջանական ԽՍՀ-ի ծովափնյա Սումգայիթ քաղաքի հայ բնակչության դեմ ուղղված ջարդերի՝ Սումգայիթի ջարդերի մասին տե՛ս Փիթեր Քենեզի «Խորհրդային պատմությունը սկզբից մինչև վերջ» գիրքը (2-րդ հրտ., Քեմբրիջի համալսարանի հրտրկչ. 2006թ.) էջ 272

հնարավոր չի եղել օգնել նրան: Եվ կրկին, 2022 թվականի դեկտեմբերի 20-ին, նրան անհրաժեշտ էր հիվանդանոց գնալ շատ անհրաժեշտ հետազոտության համար, բայց դարձյալ վառելիքի բացակայության պատճառով չէին կարողացել նրան տեղափոխել հիվանդանոց: Ցավոք, 2022 թվականի դեկտեմբերի 21-ին հարսը վիժել էր: Բժիշկները նրան ասել էին, որ եթե նրան ժամանակին տեղափոխեին հիվանդանոց, ապա հնարավոր կլիներ վիժումը կանխել:

23LC-NK0002 վկան նշում է.

> *"[Ա]նհնար է դիմանալ այս ցավին:Մենք դեռ չգիտենք երեխայի մահվան պատճառը: Մենք դեռ չենք ստացել նորածնի մարմինը, քանի որ մահվան պատճառը պարզելու համար անհրաժեշտ է հետազոտություն, իսկ դա հնարավոր է անել միայն Հայաստանում: Սակայն կրկին շրջափակման պատճառով չենք կարող երեխային հասցնել Հայաստան՝ հետազոտելու, մահվան պատճառը պարզելու համար, որպեսզի կարողանան երեխայի մարմինը մեզ վերադարձնեն: Հիվանդանոցում գտնվելու ժամանակ հարսս պառկած էր սեղանին, երբ հանկարծ հոսանքն անջատվեց, ինչի հետևանքով շտապ օգնության կարիք առաջացավ»:*

Վկայի տասնամյա եղբորորդին նույնպես առողջական խնդիրներ ունի: Նրան անհրաժեշտ է մասնագիտացված բժշկական օգնությունը ամիսը երեք (3) անգամ, սակայն մասնագետը գտնվում է Հայաստանում: Երեխայի պլանավորված հաջորդ այցը 2022 թվականի դեկտեմբերի 11-ին էր: Տասնամյա տղայի ծնողներն իրենց մյուս երեխաներին թողել էին 23LC-NK0002 վկայի մոտ, որպեսզի բուժման նպատակով տեղափոխեն Հայաստան: Սակայն 2022 թվականի դեկտեմբերի 12-ին շրջափակումն անհապաղ գործողության մեջ դրվեց՝ առանց որևէ նախազգուշացման, ինչն էլ ընտանիքի բաժանման պատճառ դարձավ: 23LC-NK0002 վկայի մոտ մնացած երեխաները անորոշ ժամանակով բաժանվել էին իրենց ծնողներից: Դեկտեմբերի 30-ին ԿԽՄԿ-ի աջակցությամբ 23LC-NK0002 վկան իր եղբոր երեխաներին տեղափոխեց Գորիս (Հայաստան), որպեսզի նրանք կարողանան միանալ իրենց ծնողներին: 23LC-NK0002 վկան ապրում է Լեռնային Ղարաբաղում՝ իր Վանք գյուղում: Նա նշում է.

> ***«[Մ]եզ մոտ կան տարեց և հղի կանայք, որոնք հիվանդանոցային խնամքի կարիք ունեն: Ինչպե՞ս կարող ենք այսպես ապրել: Դրանք անմարդկային պայմաններ են»***

Չնայած շրջափակման պատճառով իր ընտանիքում ազդեցուցիչ իրադարձություններին, 23LC-NK0002 վկան կարծում է, որ իր բախտը բերել է, քանի որ կարող է ապրել Լեռնային Ղարաբաղի իր սեփական Վանք գյուղում:

3.2 Վկայություն. Ուղևորություններն ու ընտանիքի վերամիավորումը գրեթե անհնար են Վկա 23LC-0009[12]

23 LC-0009 վկան ծնվել է 1967 թվականին Լեռնային Ղարաբաղի Ղազանչի գյուղում և տեղափոխվել Լեռնային Ղարաբաղի Թալիշ գյուղ: 2016թ.-ի ապրիլին Ադրբեջանի

[12] 2023թ. ապրիլի 15-ին ՃԱԿ-ն արձանագրել է 23LC-0009 վկայի ցուցմունքները

ռազմական հարձակման ժամանակ նա վիրավորվել էր, իսկ նրա տունը՝ ավերվել: Նա և իր ընտանիքը փախել էին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Կիլիկիա համայնք:

2022 թվականի նոյեմբերի 20-ին 23LC-0009 վկան մեկնեց Ռուսաստան: 2022 թվականի դեկտեմբերի 11-ին նա վերադարձել էր Հայաստան՝ Լեռնային Ղաաբաղ իր տուն վերադառնալու նպատակով: Սակայն, 2022թ. դեկտեմբերի 12-ին «էկոակտիվիստները» փակեցին Լաչինի միջանցքը՝ 23LC-0009 վկային թողնելով Հայաստանում բախտի քմահաճույքին: Նա մեկնեց Գորիս՝ Լեռնային Ղարաբաղին Հայաստանի ամենամոտ քաղաքը: Նրա պես ևս քսանվեց (26) մարդ հույս ունեին վերադառնալ Լեռնային Ղարաբաղի իրենց տները ռուս խաղաղապահների օգնությամբ:

Նրանք բոլորը մեկնեցին, ինչպես պայմանավորված էր, ռուս խաղապահների օգնությամբ, սակայն Շուշի հասնելուն պես «էկոակտիվիստները» թույլ չեն տվել նրանց անցնել: Կինը նշում է.

> «[Ն]րանք շարունակ բղավում էին «Ղարաբաղն Ադրբեջան է»:

Մեկնողները չորս (4) ժամ սպասում էին իրենց մեքենայում: Այդ ընթացքում քսանվեց (26) մեկնողների լարվածությունն ու վախն էլ ավելի մեծացավ: Երեք (3) կին հայտնվեց ծանր վիճակում և բժշկական օգնության կարիք ունեին: Ռուս խաղաղապահները առաջին բուժօգնություն ցուցաբերեցին և առաջարկեցին նրանց ռուսական շտապօգնության մեքենայով տեղափոխել Ստեփանակերտի (Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք) հիվանդանոց: Սակայն «էկոակտիվիստները» արգելափակել էին նրանց անվտանգ անցումը և փոխարենն առաջարկել Շուշիի հիվանդանոց, որը 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով օկուպացվել էր Ադրբեջանի կողմից:

Ռուս խաղապահները չէին համաձայնել թույլ տալ հայ կանանց տեղափոխել Շուշի: Ժամեր տևած բանակցություններից հետո երկու (2) կանայք և նրանցից մեկի հարսը ռուսական շտապօգնության մեքենայով տեղափոխվել են Ստեփանակերտ, իսկ մյուս կինը Ստեփանակերտ էր տեղափոխվել ադրբեջանական շտապօգնության մեքենայով:

Երկարատև այդ բանակցությունների և նյարդեր քայքայող իրադարձությունների ընթացքում 23LC-0009 վկան դուրս էր եկել մեքենայից և հարցաքննվել ռուսների կողմից: Քաղաքացիական հագուստով մի տղամարդ նրա հետ ռուսերեն էր խոսել և ասել, որ հիվանդ ուղևորների հետ ամեն ինչ կարգին է: 23LC-0009 վկան հասկացել էր, որ իր հետ զրուցող տղամարդն իրականում ադրբեջանցի բժիշկ է: Այդ պահին մի զինված ադրբեջանցի ընդհատեց նրան և հրամայեց հեռանալ և հետևել իրեն: Այդ ադրբեջանցի բժիշկը հիվանդին ադրբեջանական շտապ օգնության մեքենայով ուղեկցել էր Ստեփանակերտ:

Ավաղ, 23LC-0009 վկային և մնացած ուղևորներին, ովքեր իրենց տներից մի քանի րոպե հեռավորության վրա էին գտնվում, թույլ չտվեցին մտնել Ստեփանակերտ և ստիպեցին վերադառնալ Գորիս:

Մինչ օրս 23LC-0009 վկան ապրում է Գորիսի հյուրանոցներից մեկում: Նա ամեն առավոտ արթնանում է, հագնվում՝ հուսալով, որ այսօր կլինի այն օրը, երբ նա տուն կվերադառնա իր ընտանիքի մոտ: 2022 թվականի դեկտեմբերի 12-ից նրան մերժում են Լեռնային Ղարաբաղ վերադառնալ:

Վկա 23LC-0006[13]

23LC-0006 վկան ծնվել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում և 44-օրյա պատերազմից հետո տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Ծաղկաշատ գյուղ: 2022 թվականի դեկտեմբերի 6-ին նա թռել էր Ռուսաստան՝ դստերն այցելելու:

Երբ 23LC-0006 վկան Հայաստան վերադարձավ, նա գնաց Գորիս՝ սպասելու տրանսպորտային միջոցով Լեռնային Ղարաբաղ տեղափոխմանը, որպեսզի կարողանա վերադառնալ իր տուն: Լեռնային Ղարաբաղ տարանցումն ապահովելու միակ միջոցը ԿԽՄԿ-ում գրանցվելն էր: Նրան ասել էին. «Ոչ ոք չի կարող ինքնուրույն վերադառնալ»:

23LC-0006 վկան պատմում է, թե ինչպես էին քսանյոթ (27) հայերը Լեռնային Ղարաբաղից տուն վերադառնում ռուս խաղաղապահների օգնությամբ: Բայց երբ հասել էին Ծուշի, նրանց կանգնեցրել էին «էկոակտիվիստները», որոնք գոռում էին.

«[Ղ]արաբաղ բիզիմդիր»՝ Ղարաբաղը մերն է:

Մի ադրբեջանցի տղամարդ էր մտել ավտոբուս և պահանջել հայ կանանցից մեկի անձնագիրը: Նրա մոտ կար անունների ցուցակ, և նա կնոջ անձնագիրը ստուգեց այդ ցուցակով: ԿԽՄԿ ներկայացուցիչն վկային հայտնել էր, որ անունների ցուցակն ուղարկվել է Ադրբեջան, և ադրբեջանական կողմը կորոշի՝ թույլատրել նրանց վերադառնալ, թե ոչ:

23LC-0006 վկան ասում է.

«[Մ]եր տունը 15 րոպե հեռավորության վրա էր, բայց մեզ թույլ չտվեցին գնալ»

23LC-0006 վկային և մնացած քսանվեց (26) մեկնողներին հրամայեցին վերադառնալ Գորիս: Ուժեղ սթրեսի և անհանգստության պատճառով կանանցից երեքի (3) առողջական վիճակը սկսեց վատթարանալ: Ռուսական շտապ օգնությունը փորձում էր նրանց տեղափոխել Ստեփանակերտի հիվանդանոց, սակայն ադրբեջանցիները արգելափակել էին ճանապարհը: «Էկոակտիվիստները» բղավում էին նրանց վրա և արգելափակում նրանց անցումը:

Հանկարծ ադրբեջանական շտապ օգնության մեքենա ժամանեց, որպեսզի կանանց տեղափոխեն Ծուշիի հիվանդանոց: Թե՛ հայերը, և թե՛ ռուսները մերժեցին այդ առաջարկը: Ադրբեջանական շտապօգնության մեքենան ծանր վիճակում գտնվող

[13] 2023թ. ապրիլի 15-ին ՃԱԿ-ն արձանագրել է 23LC-0006 վկայի ցուցմունքները

կանանցից մեկին տեղափոխեց Ստեփանակերտ, իսկ ռուսական շտապօգնության մեքենան մյուս երկու (2) կանանց և կանանցից մեկի հարսին տեղափոխել էր Ստեփանակերտ:

23LC-0006 վկային խնդրել էին դուրս գալ մեքենայից՝ ռուսական կողմի կողմից հարցաքննության համար: Կինը ցանկանում էր արտահայտել իր զգացումները ստեղծված իրավիճակի վերաբերյալ, բայց փոխարենը նա և մնացած մեկնողները, բոլոր քսաներկուսը (22) ստիպված էրն վերադառնալ Գորիս:

23LC-0006 վկան իրեն հաջողակ էր համարում, քանի որ նա կարողացել էր տուն վերադառնալ Լեռնային Ղարաբաղ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքում 2023 թվականի ապրիլի 23-ին պաշտոնական անցակետի տեղադրումից երեք (3) օր առաջ:

Վկա 23LC-NK0007[14]

23LC-NK0007 վկան բնակվում է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում: Նա Լեռնային Ղարաբաղում հայկական իշխանությունների կողմից նշանակվել էր որպես հիմնական կոնտակտային անձ ռուս խաղապահների հետ հաղորդակցվելու և համագործակցելու համար՝ Լեռնային Ղարաբաղից Հայաստան հայերի փոխադրմանն աջակցելու նպատակով: Նա նշում է.

> «2022թ. դեկտեմբերի 12-ից ի վեր, երբ շրջափակումը գործողության մեջ դրվեց, սահմանափակվել է հայերի տեղաշարժը, իսկ երբեմն տեղաշարժ կամ տարանցում բացարձակապես չի լինում: Նույնիսկ ամենածանր հիվանդների տեղափոխումը, որոնց բուժօգնությունը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետությունում, իրականացվում է ԿԽՄԿ-ի օգնությամբ՝ Լեռնային Ղարաբաղի առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ:
>
> Թեև Ադրբեջանը պնդում է, որ շրջափակում չկա, այնուամենայնիվ, Լաչինի միջանցքով փոխադրումները շատ սահմանափակ են և իրականացվում են ԿԽՄԿ աշխատակիցների կամ ռուս խաղապահների ուղեկցությամբ: Դա չի նշանակում, որ շրջափակումն ավարտվել է. տեղաշարժը թույլատրվում է միայն հրատապ բժշկական օգնության կարիք ունեցողների համար: Մինչ ԿԽՄԿ-ի հետ այս համագործակցությունը հնարավոր չէր ԼՂ բնակիչներին Հայաստանից տեղափոխել Լեռնային Ղարաբաղ:
>
> Բացի այն, որ այսպես կոչված «էկոակտիվիստները» ստեղծել են այս շրջափակումը, նրանք նաև մի շարք բնապահպանական աղետներ են առաջացրել մեզ համար: Քանի որ նրանք դադարեցրել էին Հայաստանից եկող էլեկտրաէներգիայի և գազի մատակարարումը, մենք այժմ հույսներս դրել ենք էներգիայի այլընտրանքային աղբյուրների վրա: Էլեկտրական մալուխի վնասումից հետո Լեռնային Ղարաբաղը ապավինում էր էլեկտրաէներգիայի տեղական սահմանափակ արտադրությանը: Մասնավորապես, տարածաշրջանը ներկայումս կախված է Սարսանգի հիդրոէլեկտրակայանից, որի հզորությունը սահմանափակ է: Էլեկտրաէներգիայի պահանջարկը մեծանում է նաև այն պատճառով, որ

Ադրբեջանը պարբերաբար դադարեցնում է Լեռնային Ղարաբաղ բնական գազի մատակարարումը:

Ամենավատն այն է, որ մենք պարենային մթերքի պակաս ունենք: Վերջին 6 ամիսների ընթացքում Լեռնային Ղարաբաղ պարենային մթերքի մատակարարումը կատարվել է ռուս խաղապահների կողմից: Սակայն մատակարարման այս ծավալը կազմում է մինչև շրջափակումը ներկրվող ծավալների ընդամենը 10%-ը: Սա Լեռնային Ղարաբաղի տնտեսության մեջ լուրջ գնաճի պատճառ է դարձել:

3.3 Վկայություն. Վառելիքի, էլեկտրաէներգիայի և սննդի պակաս

Վկա 23LC-NK0002

23LC-NK0002 վկան նկարագրում է գազի և էլեկտրաէներգիայի անջատումները: Նա նշում է, որ այն սկսվել է 2022թ. մարտին, սակայն շրջափակումից ի վեր գազամատակարարումը հաճախ դադարեցվում է օրական վեցից ութ ժամ հովհարային անջատումներով: 23LC-NK0002 վկան նշում է.

> «[Մ]ենք բոլոր առումներով շրջափակման մեջ ենք»: Մարդիկ տառապում են: Ամեն ինչ սակավ է: Առանց լույսի, առանց գազի ենք ապրում: Նրանք խաղում են մարդկանց հետ: Այս պահին հոսանք չկա, ուստի նստած ենք մթության մեջ: Նրանք թույլ չեն տալիս մարդկանց ապրել նորմալ կյանքով: Շատ բան է կախված էլեկտրաէներգիայից: Գազի և էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով երեխաները չեն կարողանում շաբաթներ շարունակ դպրոց հաճախել: Չենք կարողանում նույնիսկ տարրական տնային գործերն անել, էլ ուր մնաց՝ նորմալ մարդկանց պես ապրել»:

Վկա 23LC-NK0030[15]

23LC-NK0030 վկան 47-ամյա տղամարդ է, ով ծնվել և մեծացել է Ադրբեջանական ԽՍՀ-ի Սումգայիթ քաղաքում: Նա Սումգայիթում ապրել է մինչև 1988 թվականը, երբ սկսվեցին ջարդերը[16]: Վկան և իր ընտանիքը ստիպված են եղել փախչել Սումգայիթի իրենց տանից և ապաստան փնտրել Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում: 23LC-NK0030 վկան բնակվում է Ստեփանակերտում: Նա զգալի ժամանակահատված ծառայել է Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակում և մինչև 2019 թվականը զբաղեցրել է բրիգադի հրամանատարի և զորամասի հրամանատարի պաշտոնը: Վկան եղել է Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի (1990-ականների սկզբին), 2016 թվականի և 2020 թվականի պատերազմների մասնակից: 23LC-NK0030 վկան պատմում է, որ գազն ու էլեկտրաէներգիան օրական 3-4 անգամ անջատում են, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում ձմռան ամիսներին, երբ եղանակը զրոյից ցածր է և գետնին ձյուն կա: Նա

[14] 2023թ. հունիսի 5-ին ՃԱԿ-ն արձանագրել է 23LC-NK0007 վկայի ցուցմունքները
[15] 2023թ. հունվարի 25-ին ՃԱԿ-ն արձանագրել է 23LC-NK0030 վկայի ցուցմունքները
[16] 1988 թվականի փետրվարի վերջին Ադրբեջանական ԽՍՀ-ի ծովափնյա Սումգայիթ քաղաքի հայ բնակչության դեմ ուղղված ջարդերի՝ Սումգայիթի ջարդերի մասին տե՛ս Փիթեր Քենեզի «Խորհրդային պատմությունը սկզբից մինչև վերջ» գիրքը (2-րդ հրտ., Քեմբրիջի համալսարանի հրտրկչ. 2006թ.) էջ 272

նշում է.

> «[Մ]ոտ 4700 մարդ կորցրել է աշխատանքը: Լաչինի միջանցքը պարզապես ճանապարհ չէ, այն սննդամթերք և անհրաժեշտ ապրանքների մատակարարման հիմնական զարկերակն է: Միջազգային հանրությունը չպետք է սպասի, որ մարդիկ մահանան իրենց բակում: Սա կարող է Լենինգրադի շրջափակումը դառնալ»:

2023թ. հունվարի սկզբին՝ ձմռան ամիսներին, պարենամթերքի պակասը վերաճեց ճգնաժամի[17]: Լեռնային Ղարաբաղի իշխանությունները մտցրեցին սննդամթերքի նորմավորման կտրոնային համակարգ: 23LC-NK0002 վկան նշում է.

> «[Ճ]րջափակումից ի վեր մենք ունեցել ենք սննդամթերքի խիստ պակաս: Անկախ եղանակային պայմաններից՝ մարդիկ կանգնում են երկար հերթերում: Հինգ (5) ձվի համար ես չորս ժամ հերթ էի կանգնել: Հետագայում մարդկանց տրվեցին սննդի կտրոններ, բայց մենք դեռևս պետք է հերթ կանգնենք: Ստեփանակերտում ծնողներս ու եղբայրս ամեն օր նպարեղենի համար հերթ են կանգնում: Երկու (2) օր առաջ եղբայրս մի քանի ժամ հերթ էր կանգնել՝ մեր հիվանդ մոր համար մեկ (1) կիլոգրամ գազար տուն բերելու համար»:

Վկան 23LC-NK0028[18]

23LC-NK0028 վկան 75-ամյա տղամարդ է, ով ծնվել է Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանում: Նա մեծացել է Ասկերանում և վկա եղել 1988 թվականին տեղի ունեցած Ասկերանի բախմանը[19]: 90-ականների սկզբներին վկան մասնակցել է Ղարաբաղյան առաջին պատերազմին: Նա բազմաթիվ առողջական խնդիրներ ունի: Նա սնվում է իր տան այգուց և ջերմոցից, բայց ի վիճակի չէ դրանք պահել, քանի որ հումքը բերվում է Հայաստանից, և նա ասում է, որ շրջափակման պատճառով վառելիք չունի՝ իր մեքենան օգտագործելու կամ անհրաժեշտ իրեր գնելու համար: Նա նշում է.

> «[Հ]աշվի առնելով տարիքս, ինձ համար լուրջ դժվարություն է մեկ կիլոմետր քայլել՝ հողս մշակելու համար: Բավարար վառելիք չունեմ, որպեսզի այնտեղ մեքենայով հասնեմ: Ես նաև աշխատում եմ հողում և ընտանիքիս սնունդով ապահովում: Տարբեր վայրերում հողամասեր ունեմ: Պլանավորում էի լոլիկ, վարունգ, կարտոֆիլ աճեցնել, հիմնականում այն ամենը, ինչ մեզ անհրաժեշտ է: Սակայն խնդիրն այն է, որ այսօր ես չեմ կարողանում սերմեր ձեռք բերել: Հիբրիդային այս սերմերն առկա են միայն Հայաստանում: Բերք ստանալու համար վնասատուների դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ են քիմիական նյութեր: Ամեն տարի մեկնում եմ Հայաստան՝ բերելու այս բոլոր պարագաները:

---

[17] Amnesty, *Ադրբեջան. Լաչինի միջանցքի շրջափակումը, որը հազարավոր կյանքեր վտանգի տակ է դնում, պետք է անհապաղ վերացվի:* Amnesty (9 փետրվարի 2023թ.) https://www.amnesty.org/en/latest/news/2023/02/azerbaijan-blockade-of-lachin-corridor-putting-thousands-of-lives-in-peril-must-be-immediately-lifted/

[18] 2023թ. հունվարի 27-ին ՃԱԿ-ն արձանագրել է 23LC-NK0028 վկայի ցուցմունքները

[19] Ասկերանում տեղի ունեցած բախումը 1988 թվականի Սումգայիթի ջարդերի նախերգանքն էր: Երկու օր ջարդեր, որի ընթացքում երկաթե ձողերով և այլ ինքնաշեն զենքերով զինված ադրբեջանցիները հարձակվում էին հայ բնակիչների վրա, տե՛ս Ստյուարտ Ջ. Կաուֆմանի «Ժամանակակից ատելություն. էթնիկական պատերազմի խորհրդանշական քաղաքականությունը» էջ 63

> Առանց օրգանական խառնուրդների և պարարտանյութերի, հողը բերք չի տա: Նույնիսկ տեղական պարարտանյութերը հնարավոր չէ տեղափոխել վառելիքի բացակայության պատճառով: Խառնուրդները ձեռք բերելու համար պարկեր չկան: Ջերմոցների համար անհրաժեշտ են կաթիլային ոռոգման համակարգեր և լարեր, որոնք ներկայումս առկա չեն: Սրանք այն գործոններն են, որոնք անհրաժեշտ են գյուղատնտեսության և գոյատևելու համար: Հողամասում աշխատողներ ունեմ, որոնք անգործ չեն մնացել»:

Վկան պատմեց իր ընկերոջ մասին, ով նույնպես ջերմոց ունի, որը ջեռուցվում է վառելիքով: Շրջափակման պատճառով ընկերն ահռելի տնտեսական վնասներ է կրել: Տղամարդը նշում է.

> «[Ն]րա ջերմոցը մոտավորապես կես հեկտար է, և դրա ջեռուցումը վառելիքից է կախված: Որտեղի՞ց է նա գտնելու վառելիք: Քանի որ կապի մեջ եմ նրա հետ, գիտեմ, որ այս պահին նա զգալի կորուստներ ունի: Գիտեմ, որ կառավարությունն օգնում է նրան, քանի որ նրա ջերմոցում արդեն կան լավ մշակված բույսեր, ինչպիսիք են լոլիկը, վարունգը և պղպեղը, որոնք մեկ ամսից կարող են շուկա հանվել: Այնուամենայնիվ, նա շարունակում է զգալի վնասներ կրել, քանի որ բույսերի խնամքը զգալի ծախսեր է պահանջում»:

Նա նշում է.

> ***«[Այ]ս ճանապարհը մեր միակ հույսն է: Մենք գնում ենք մեր մահին ընդառաջ: Սա կիանգեցնի ցեղասպանության»***

Ականատեսների վկայությունները ցույց են տալիս, որ Ադրբեջանի կողմից իրականացված շրջափակման հետևանքով ողջ բնակչությունը հայտնվել է հումանիտար ճգնաժամում: Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը լրջորեն տուժել է, ինչը պարենի պակասի, արտադրության և առևտրի կրճատման, բյուջեի դեֆիցիտի, հարկային եկամուտների կրճատման, գործազրկության, գնաճի, հուսահատության, անհանգստության, սթրեսի, հիվանդությունների և մահվան պատճառ է դարձել: 44-օրյա պատերազմից ի վեր, որն ավարտվեց 2020թ. նոյեմբերին հրադադարի հաստատմամբ, Լեռնային Ղարաբաղից բոլոր հայերին հարկադրաբար վտարելու՝ Ադրբեջանի քաղաքականությունը համակարգված պլանավորվել է, և շրջափակումը հայերի էթնիկ զտումներն իրենց հայրենի հողից ավարտին հասցնելու համար իրականացվող բազմաթիվ քայլերից մեկն է:

4.0 Նախագահ Ալիևի էթնիկ զտումների քաղաքականությունը

Լեռնային Ղարաբաղից հայերին վտարելու Ադրբեջանի պետական քաղաքականությունը, էթնիկ զտումների նրանց քաղաքականությունը շատ պարզ է եղել 44-օրյա պատերազմի հենց սկզբից: Չնայած միջազգային հանրության հայտարարություններին, որոնք կոչ են անում Ադրբեջանին բացել ճանապարհը և ապաշրջափակել Լաչինի միջանցքը, Ալիևի վարչակարգը մտադիր է ավարտին հասցնել

Լեռնային Ղարաբաղից բոլոր հայերին վտարելու իր ծրագիրը:

2023 թվականի հունվարի 20-ին նախագահ Ալիևը հայտարարել է[20].

> ***«[Ա]յսպիսով, ով չի ցանկանում մեր քաղաքացին դառնալ, ճանապարհը փակ չէ, այն բաց է: Նրանք կարող են հեռանալ երբ ցանկանան, ոչ ոք նրանց չի կանգնեցնի»***

Թեև նախագահ Ալիևի ծրագիրը պարզ է՝ ստիպել բոլոր հայերին լքել Լեռնային Ղարաբաղը, իրականում կեղծ է այն, որ նրանց թույլ են տալիս մեկնել: Եվ չնայած Ալիևի հռետորաբանությանը, ճանապարհը մնում է արգելափակված Ադրբեջանի կողմից՝ Ռուսաստանի լուռ աջակցությամբ:

Ինչպես փաստում է Ճշմարտության և արդարադատության կենտրոնը Լեռնային Ղարաբաղի Մեծ Շեն, Հին Շեն և Եղցահող գյուղերում հումանիտար ծանր ճգնաժամի մասին իր զեկույցում, ժողովուրդը կանգնած է սովի վերահաս վտանգի առաջ: Զեկույցում քննարկված այս երեք (3) գյուղերի պես, Լեռնային Ղարաբաղի մնացած մասը, որը կախում ունի Հայաստանից պարենի և դեղորայքի առումով, սովի եզրին է գտնվում: Վերոնշյալ գյուղերի բնակիչները հաշվարկել էին, որ եթե շրջափակումը չվերացվի, ապա իրենց սննդի պաշարները կբավականացնեն մինչև մայիսի վերջ[21]: Հաշվի առնելով միջանցքի շարունակվող շրջափակումը և այս գյուղերից որևէ նորությունների բացակայությունը՝ կարելի է եզրակացնել, որ այդ համայնքները կանգնած են սննդի խիստ պակասի և հնարավոր սովի առաջ[22]:

5.0 Ադրբեջանը խախտում է միջազգային իրավունքը

Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման պատճառով Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերը փաստացի մեկուսացվել են Հայաստանից: Լաչինի միջանցքի փակումը հանգեցրել է 120 000 մարդու մեկուսացման՝ զրկելով նրանց մարդու հիմնարար իրավունքներից, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու, ապրելու, ֆիզիկական և հոգեկան առողջության, կրթության, բավարար կենսամակարդակի, աշխատանքի և ընտանեկան կյանքի իրավունքից: Այս իրավունքները ճանաչվում են միջազգային իրավունքի համաձայն: Նույնիսկ զինված հակամարտությունների իրավիճակներում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրում (ՏՍՄԻՄԴ) ամրագրված մարդու իրավունքների հիմնարար պարտավորությունները շարունակում են կիրառվել: Դաշնագրի Հոդված 12.1-ն ընդունում է, որ մասնակից պետությունները ճանաչում են «[յ]ուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը», մինչդեռ 12.2-րդ հոդվածն ընդգծում է այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն՝ այդ իրավունքի լիարժեք իրացման համար:
Առողջության իրավունքը ներառում է ոչ միայն առողջապահական ծառայությունների

[20] Ադրբեջանի Հանրապետության նախագահ: Իլհամ Ալիևը հարցազրույց է տվել տեղական հեռուստաալիքին (10 հունվ. 2023թ), https://president.az/en/articles/view/58555.
[21] «Դանակը ոսկորին է հասել»: ՃԱԿ-ի զեկույցը հումանիտար ծանր ճգնաժամի մեջ գտնվող գյուղերի մասին (24 ապր. 2023թ)
[22] Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտ (7 մայիսի 2023թ), Լեմկինը և Արցախի գործունեությունը և դիտարկումները

հասանելիությունը, այլ նաև առողջությանը նպաստող այնպիսի գործոններ, ինչպիսիք են անվտանգ սնունդը, սնվելը, առողջ աշխատանքային պայմանները և շրջակա միջավայրը[23]: Այսպիսով, կյանքի, սննդի, աշխատանքի, կրթության, մարդկային արժանապատվության, խտրականության բացառման, հավասարության, հավաքների և շարժման և այլ իրավունքներն ու ազատություններն առողջության իրավունքի անբաժանելի բաղադրիչներն են: Առողջության իրավունքը ամրագրված է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965 թվականի միջազգային կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ե) կետի (iv) ենթակետում:

Որպես Դաշնագրի և Կոնվենցիայի մասնակից պետություն՝ Ադրբեջանը պարտավոր է հարգել, պաշտպանել և իրացնել այդ իրավունքները: Ադրբեջանը պարտավորություն ունի նաև Կոնվենցիայի 2-րդ հոդվածով, որը պահանջում է դատապարտել ռասայական խտրականությունը և բոլոր ձևերով այն վերացնելու քաղաքականություն վարել: Բացի այդ, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ե) կետի (iv) ենթակետը պարտավորեցնում է Ադրբեջանին երաշխավորել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, մասնավորապես՝ հանրային առողջության, բժշկական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական ծառայությունների իրավունքը: Հետևաբար, Լաչինի միջանցքով ազատ տեղաշարժի, ներառյալ առաջին անհրաժեշտության հումանիտար ապրանքների, այդ թվում՝ սննդամթերքի և դեղորայքի ներմուծման հետ կապված Ադրբեջանի կողմից ցանկացած գործողություն կամ սահմանափակում վնասակար ազդեցություն են ունենում առանձին մարդկանց կյանքի վրա: Որպես Դաշնագրի և Կոնվենցիայի կողմ՝ Ադրբեջանի կողմից այդ պարտավորությունների խախտումը նշանակում է ՄԱԿ-ի մի շարք հիմնարար համաձայնագրերի խախտում:

Լաչինի միջանցքի փակումը Լեռնային Ղարաբաղի ժողովրդին թողել է մեկուսացված, զրկված մարդու հիմնարար իրավունքներից, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու, ապրելու, ֆիզիկական և հոգեկան առողջության, կրթության, բավարար կենսամակարդակի, աշխատանքի և ընտանեկան կյանքի իրավունքից, որոնք ճանաչվում են միջազգային իրավունքի համաձայն[24]: Նույնիսկ զինված հակամարտությունների իրավիճակներում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրում (ՏՍՄԻՄԴ) սահմանված մարդու իրավունքների հիմնարար պարտավորությունները շարունակում են կիրառվել[25]: Դաշնագրի Հոդված 12.1-ի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են «[յ]ուրաքանչյուրի ֆիզիկական և

[23] ՏՍՄԻԿ ընդհանուր մեկնաբանություն No. 14. Առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունք (Հոդվ. 12), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, 11 օգոստ. 2000թ. կետ 11

[24] 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1966թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, 1996թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, 1965թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, 1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, 1989թ. Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա

[25] Պաղեստինի օկուպացված տարածքում պատի կառուցման իրավական հետևանքները (խորհրդատվական եզրակացություն) [2004թ.] ԱՄԴ Ակտ 136, կետ 106, Զինված գործողություններ Կոնգոյի տարածքում (Կոնգոյի դեմոկրատական հանրապետությունն ընդդեմ Ուգանդայի) [2005թ.] ԱՄԴ Ակտ 168, կետ 216, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառումը (Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության) (Ժամանակավոր միջոցներ) [2008թ.] ԱՄԴ Ակտ 353, կետ 112, Ուիլյամ Շաբաս 'Lex Specialis? Belts and Suspenders? The Parallel Operation of Human Rights Law and the Law of Armed Conflict, and the Conundrum of Jus ad Bellum' (2007) 40 Israel Law Review, էջ 592, 598.

հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը», մինչդեռ 12.2-րդ հոդված թվարկում է «այն [ք]այլերը, որոնք պետք է ձեռնարկվեն մասնակից պետությունների կողմից… այդ իրավունքի լիարժեք իրացման համար»: Առողջության իրավունքը վերաբերում է ոչ միայն պատշաճ բժշկական օգնությանը, այլև առողջության հիմքում ընկած գործոններին, այդ թվում՝ անվտանգ սնունդ, սնվելը, առողջ աշխատանքային պայմաններ և շրջակա միջավայրը[26]: Այսպիսով, կյանքի, սննդի, աշխատանքի, կրթության, մարդկային արժանապատվության, խտրականության բացառման, հավասարության, հավաքների և շարժման և այլ իրավունքներն ու ազատություններն առողջության իրավունքի անբաժանելի բաղադրիչներն են: Առանց առողջության իրավունքի ապահովման հնարավոր չէ քննարկել մարդու հիմնարար իրավունքները: Առողջության իրավունքը, ի թիվս այլոց, ամրագրված է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ե) կետի (iv) ենթակետում:

Որպես Դաշնագրի և Կոնվենցիայի մասնակից պետություն՝ Ադրբեջանը կրում է որոշակի պարտավորություններ կատարելու պատասխանատվություն: Այս պարտավորությունները ներառում են Դաշնագրում նշված իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու պարտավորությունը, ռասայական խտրականությունը դատապարտելու և այն արմատախիլ անելու ուղղությամբ ակտիվորեն աշխատելու պարտականությունը, ինչպես նշված է Կոնվենցիայի 2-րդ հոդվածում, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, մասնավորապես՝ հանրային առողջության, բժշկական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական ծառայությունների իրավունքն ապահովելու պարտավորությունը, ինչպես սահմանվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ե) կետի (iv) ենթակետով: Հետևաբար, Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքով՝ 1996 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով երաշխավորվող ազատ տեղաշարժի նկատմամբ կիրառվող ցանկացած գործողություն կամ սահմանափակում, ներառյալ առաջին անհրաժեշտության հումանիտար ապրանքների, այդ թվում՝ սննդամթերքի և դեղորայքի ներմուծման սահմանափակումները, լուրջ հետևանքներ են ունենում առանձին մարդկանց բարեկեցության վրա: Լինելով Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային կոնվենցիայի և Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի ստորագրող կողմ՝ Ադրբեջանը խախտում է այդ համաձայնագրերը: Այսպիսով, Ադրբեջանի գործողությունները ՄԱԿ-ի մի քանի հիմնարար համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների խախտում են և պետք է պատասխանատվության ենթարկվեն:

5.1 Ադրբեջանը խախտում է եռակողմ հայտարարությունը

Արդեն ավելի քան 200 օր շարունակվող Լաչինի միջանցքի արգելափակումը խախտում է 44-օրյա պատերազմի ավարտին Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կողմից ստորագրված եռակողմ համաձայնագիրը[27]: Եռակողմ հայտարարության 6-րդ կետը

[26] Տե՛ս 23 ծանոթագրությունը վերևում
[27] Ադրբեջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը (10 նոյ. 2020թ.),

սահմանում է 5 կմ լայնությամբ Լաչինի միջանցքը՝ հեշտացնելու Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև հաղորդակցությունը՝ շրջանցելով Ծուշի քաղաքը, որը ներկայումս գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ և հարյուր տոկոսով հայաթափվել է: Եռակողմ հայտարարությունը նաև նախատեսում էր, որ ռուս խաղաղապահները կպահպանեն վերահսկողությունը Լաչինի միջանցքի նկատմամբ՝ Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգությունն ապահովելու համար: Սակայն եռակողմ հայտարարության ստորագրումից հետո Ադրբեջանը ստիպեց Լաչինի միջանցքում ապրող բոլոր հայերին լքել իրենց հողը, դադարեցրեց բոլոր ուղևորություններն ու բեռնափոխադրումները և Լաչինի միջանցքում տեղադրեց անցակետ՝ բետոնե բլոկներով և զինված զինվորականներով: Ռուս խաղապահները չեն կարողանում կամ չեն ցանկանում կանգնեցնել Ադրբեջանին նվաստացնել, ահաբեկել, սովամահ անել և սպանել Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերին:

Ադրբեջանն անտեսում է միջազգային հանրության, այդ թվում՝ ԱՄԴ-ի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի կոչերը (տե՛ս 2.0)՝ դադարեցնել ռազմական գործողությունները և բացել Լաչինի միջանցքը: Ավելի շուտ, նա իրեն հանդուգն է պահում՝ վարելով էթնիկ զտումների իր քաղաքականությունը, քանի որ իր գործողությունների համար այդ երկիրը դեռևս որևէ պատժամիջոցի չի ենթարկվել:

Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շարունակական շրջափակումը ոչ միայն հակասում է Եռակողմ հայտարարության մեջ համաձայնեցված պայմաններին, այլև անտեսում է միջազգային պարտավորություններն ու իրավական դրույթները՝ արդյունքում խախտելով տարբեր համաձայնագրեր և խոչընդոտելով ծայրահեղ անհրաժեշտ հումանիտար օգնության փոխադրմանը:

6.0 Եզրակացություն

Կառավարությունը, միջազգային կազմակերպությունները և ՀԿ-ները պետք է միավորվեն ընդդեմ ադրբեջանական ագրեսիայի: Ընդամենը երկու (2) օր առաջ՝ 2023թ. հունիսի 27-ին 4 հայ զինծառայող սպանվեց Ադրբեջանի կողմից կանխարգելիչ հարվածի հետևանքով, երբ Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարները հանդիպում էին Վաշինգտոնում՝ քննարկելու ԱՄՆ միջնորդությամբ իրականացվող խաղաղության ծրագիրը: Մտահոգության և կարեկցանքի խոսքեր էին հնչել ԱՄՆ-ի և միջազգային հանրության կողմից, սակայն Ադրբեջանը դեռ պատասխանատվության չի ենթարկվել Լեռնային Ղարաբաղում իր կողմից իրականացվող բռնությունների համար:

Այս զեկույցի նպատակն է կոչ անել միջազգային կազմակերպություններին, կառավարություններին և հասարակական կազմակերպություններին կանգնեցնել Լեռնային Ղարաբաղի հայաթափումը:

6.1 Գործողություններ, որոնք պետք է ձեռնարկի Ադրբեջանը

- Բացել Լաչինի միջանցքը և վերականգնել Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև ազատ տեղաշարժը

http://en.kremlin.ru/events/president/news/64384

- Թույլատրել սննդի և դեղորայքի տեղափոխումը
- Թույլատրել հումանիտար օգնության անարգել տարանցումը Լաչինի միջանցքով
- Պահպանել նոյեմբերի 9-ի հրադադարի եռակողմ համաձայնագրի պայմանները
- Դադարեցնել բոլոր տեսակի ռազմական ագրեսիան, ներառյալ գնդակոծությունները և անօդաչու սարքերի հարձակումները Լեռնային Ղարաբաղի ժողովրդի վրա
- Ուղիղ բանակցություններ վարել Լեռնային Ղարաբաղի հետ:

6.2 Գործողություններ, որոնք պետք է ձեռնարկի միջազգային հանրությունը

- Ադրբեջանի նկատմամբ սահմանել պատժամիջոցներ, ներառյալ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ աջակցության ակտի 907-րդ բաժինը,
- Դադարեցնել սպառազինության բոլոր վաճառքները Ադրբեջանին
- Պարտավորեցնել կատարել ԱՄԴ-ի միջանկյալ միջոցները
- ԵՄ առաքելությունը պետք է հրապարակայնորեն ներկայացնի Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտումների և Հայաստանի տարածքի օկուպացիայի իր եզրակացությունները
- Պահանջել միջազգային կառույցների՝ Լաչինի միջանցք և Լեռնային Ղարաբաղ մտնելու հնարավորություն՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հումանիտար կարիքները գնահատելու համար
- Պնդել միջազգային խաղաղապահների տեղակայումը Լաչինի միջանցքում
- Պահանջել անհապաղ և անվերապահորեն ազատ արձակել հայ ռազմագերիներին[28]

Հայերը տոկուն են և կդիմանան, սակայն Ալիևի ռեժիմը պետք է պատասխանատվության ենթարկվի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի միջազգային նորմերի շարունակական խախտումների համար: Միջազգային հանրությունը դեռևս հնարավորություն ունի պաշտպանելու իրենց հայրենիքից բնիկ ժողովուրդներին, տվյալ դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի էթնիկ զտումները դադարեցնելու և զսպելու համընդհանուր սկզբունքը:

[28] ՃԱԿ-ի զեկույցը հայ ռազմագերիների նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան.անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի մասին (28 հոկտ. 2022թ.), ՃԱԿ-ի վերլուծական զեկույցը հայ ռազմագերիների նկատմամբ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի մասին (1 սեպտ. 2021թ.)